



## **ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

### **Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 4-Ա**

#### **ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿՈՐ ՄԱՐԻԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԿՆԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանրապետության նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՆՀ-401-Ա հրամանագիրը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

#### **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մարիաննա Ստեփանյանին տրամադրել իր անվամբ կնիք:

**Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2022թ. դեկտեմբերի 29  
ք. Երևան